— Կէսօրին մէկ փառահեղ, մեծ երիտասարդ մը անցաւ,— ըսաւ Կարապետի տղայն,— քանի մը վայրկեան կեցաւ եկեղեցուոյ առաջ. իբրեւ թէ մտածէր իջնել եւ վերջը միտքը փոխէր, շտկուեցաւ ձիուն վրայ՝ քշեց եւ գնաց: Ձին ճերմակ պիսակաւոր էր, լաւ՛ ձի էր:

— Նա է՝ Գուրգէն իշխանն է. հիմա նա. Մոխրաբերդ իջած կը լինի:

— Ի՛նչ կ'ըսես, եղբայր, կարելի՛ բան է:

— Գուրգէն անկարելին կարելի կընէ: Տեսնէի՛ք թէ ինչ էր նա կայսեր քաղաքը, յունաց բանակներու մէջ, ամէնքը կը սիրէին: Մեր հայերը շատ պատիւ ունին զինուորաց մէջ. քսան տարի առաջ Յունաց կայսրը հայ է եղեր եւ Արծրունի մը. մեծ զօրապետը Մամիկոնեան էր. մենք Թորթում էինք, երբ նորա մահը իմացանք, ի՛նչ քաշ, ի՛նչ խելօք ծեր էր:

Այս միջոցին վառարանը սենեակը լուսաւորեց, եւ մեր Վահրիճ եղբայր «Փա՛ռք քեզ աստուած» ըսելով տարածուեցաւ կրակին քով, տանտէրն ալ դիմացը նստած կը հրամայէր տղոց, որ կերակուր բերեն, գինի հանեն, ձիուն ուտեստ տան:

— Բայց դու, եղբայր,— կ'ըսէր Վահրիճ,— ինձ զրուցէ՛ թէ ի նչպես է տէր Սահակ աւագերէց, մեռաւ՞, ո՛ղջ է, ի՛նչ կընէ, ո՛ւր են մեր բարեկամները. ձեզ մինակ եւ տխուր կը տեսնեմ. մեր կնքահայր Գէորգը, սանահայր Պետրոսը, ի՛նչ կ'ընեն, լաւ՞ են:

— Այստեղ, Վահրիճ իւր բոլոր հնարիմացութիւնն ի գործ գրած էր հարցմունքին ձեւին մէջ. չուզելով կնքահայր Գէորգի անունն առաջ դնել որ նա նախադասելով կասկած չի տայ թէ առաջ Գէորգի տուն գնացել էր:

— Ի՛նչ կը հարցնես, Վահրիճ,— պատասխանեց Կարապետ,— դու չե՞ս իմացեր թէ մենք այս քանի տարի է ի՛նչ կը քաշենք, աստուած մեզ երեսէ թողուց, այդ անիրաւ տաճիկը կ'ուգայ այս տարի հոս կը զարնէ, գալ տարի հոն կավարէ, կը սպաննէ, կը գերէ, կը քանդէ: